բարատեան Մայր Աթոռի վիճակի մասին և մեծամեծ յոյսեր տուաւ, թէ մեր տիրապետութիւնը վերստին կը հաստատուի»։ —«3 յունվարի Գ. Պ. Պոտեօմկին իշխանի պատուէրով ես և Ց. Լ. Լազարեը նրա մօտ գնացինք. շատ խօսեցինք մեր ազգի և Հայաստանի ազատութեան մասին. նա ինքն երկար հարցումներ արաւ մեր ազգի, Հայրապետական Աթոռի և կաթողիկոսի դրութեան մասին։ Մենք թախանձանօք աղաչեցինք նրան վերականգնել Մեծ Հայաստանում, այն է Երևանում, մեր տիրապետութիւնը. նա պատասխանեց, թէ այդ հնարաւոր գործ է, բայց թէ դրա համար անհրաժեշտ է, որ Հայրապետն ու տեղական տանուտէրներից ոմանք խնդիր տան իրենց ազատելու մասին, որպէս զի օգնութիւն հասնելու առիթ լինի»։

Այնուհետև 13 յունվարի Սուվորովը խօսակցութիւն ունեցաւ Ցոլէփ սրբազանի հետ Ղարաբաղի մելիքների մասին, և սրբազանը մի առանձին տեղեկագիր տուաւ նրան այդ նիւթի վերաբերմամբ, որ հրատարակած է հայոց ազգի պատմութեան վերաբերեալ պիւանական թղթերի Հաւաքածուի Բ. հատորում (էջ. 52—63)։

Թուի թէ հայոց ազատութեան գործի նախաձեռնութիւնն Էջմիածնի Հայրապետին թողնելու գաղափարն էր, որ դրդեց Պոտեօմկին իշխանին Ղուկաս կաթողիկոսի մօտ ուղարկել դոկտոր Ցակոբ Ռէյնէգսին[1]), որ և ճանապարհ ընկաւ Պոտեմ-

---

[1]) Դոկտոր Ցակոբ Ռէյնէգսը ծնուած է Այալէբէնում 1744 թ.։ Իւր իսկական ազգանունն Այլիս էր, բայց յայտնի չէ, թէ ինչո՞ւ Ռէյնէգսի փոխեց։ Երիտասարդական հասակից ուսել էր բնական գիտութիւններ և մանաւանդ բժշկութիւն։ Աշխարհներ տեսնել փափագելով, իւր հայրենիքը թողեց և 1776 թ. Վենետիկ և Կ Պոլիս գնաց, այն տեղից Թոքատ, Էրզրում և Կարսի վրայով Պարսկաստան՝ յատկապէս Էջմիածինը տեսնելու համար, ուր հաւանականօրէն հասաւ 1778 թ։ Այդ միջոցին հայրապետական աթոռի վրայ նստած էր Սիմէոն կաթողիկոսը, որ գտնուում էր ամարանոցում։ Ռէյնէգսը ներկայացաւ նրան Կ. Պոլսի պատրիարքի յանձնարարական նամակով։ Նրան մի գորգաւարդ և արևելեան կերպով կահաւորուած շքեղ վրան յատկացրին։ Կաթողիկոսի վսեմ ու բարեմոյն պատկերն և գրաւիչ ձևերը հիացրին նրան։ Ռէյնէգսի վկայութեամբ՝ Հայրապետը մի ընդհանուր յարգանք վայելող և իւր ուղևորութիւնների շնորհիւ շատ բաներ գիտցող մարդ էր, և Ռէյնէգսը շատ օգտաւէտ գիտելիքներ ստացաւ նրանից։ Դոկտորը 9 օր

Հայ մատենագրության թուանշային գրադարան